Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ***<u>Գործուղվող անձի անունը, ազգանունը</u>***
   Գայանե Գաբրիելյան

2. ***<u>Զբաղեցրած պաշտոնը</u>***
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. ***<u>Գործուղման վայրը և ժամկետները</u>***
   Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել

4. ***<u>Հրավիրող կողմը</u>***
   ԵՄ-ն Հայաստանի համար «Արևելյան գործընկերության շրջանակի համագործակցություն»

5. ***<u>Գործուղման նպատակը</u>***
   Մասնակցություն «Կանաչ տնտեսության համար հենքի ստեղծում. քաղված դասեր Արևելյան գործընկերության շրջանակի համագործակցությունից» խորագրով տարածաշրջանային համաժողովին:

6. ***<u>Քննարկված թեմաները</u>***

ա. Երկօրյա քննարկումների ժամանակ անցկացվել Արևելյան գործընկերության շրջանակի համագործակցության առաջընթացը խորագրով քննարկում,
բ.Կառավարությունների առաջնահերթությունները կանաչ անցման շրջանակներում,
գ. Հանրային կառավարման շրջանակներում կանաչ օրակարգի հիմնախնդիրները,
դ. Կանաչ/ կայուն գնումների կարևորությունը, իբրև կանաչ անցման խթան,
ե.Կանաչ գնումների փաթեթների ուսումնասիրություն Արևելյան գործընկերության երկրների շրջանակի համագործակցության շրջանակներում,
ունից»,
զ. Պանելային քննարկում կայուն գնումների ձեռքբերումների և հետագա անելիքների մասին,
է. Կանաչ/կայուն գնումների չափորոշիչների քաղաքականության առաջընթացը,

ը.Պանելային քննարկում կանաչ ակումբների գործունեության, հնարավորությունների և առաջընթացւ մասին:
թ.Փակման արարողություն:

### 7. ***<u>Հանդիպումները, ելույթները</u>***

Ելույթ եմ ունեցել առաջին օրը «Կառավարությունների առաջնահերթությունները կանաչ անցման շրջանակներում» խորագրով քննարկմանը, որի ընթացքում ներկայացրել եմ ՀՀ առաջադիմությունը կանաչ օրակարգի և գործողությունների շրջանակներում, լուսաբանելով բոլոր ծրագրերը և ձեռքբերումները, խոչընդոտները և հետագա անելիքները:
Առանձին պանելային քննարկմանը հանդես մ եկել իբրև պանելային բանախոս, որի շրջանակներում առանձնացրել եմ բոլոր երկրների կանաչ օրակարգերի պատմական ակնարկը զուգահեռներ տանելով ՀՀ պատմական ժամանակագրության հետ: Երկրորդ մասում ներկայացրել եմ ներկայիս իրավիչակը շրջանակաձև տնտեսության և ռազմավարութնա, բացի այդ կանաչ ֆինանսական համակարգի կարևորության և կանաչ բոնդերի արդիականության մասով:

### 8. ***<u>Հադիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>***

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել սույն ծրագիրը և թիրախավորել նաև մասնավոր հատվածը՝ փորձելով ներառել նաև տարածաշրջանի այլ երկրները:

### 9. ***<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները</u>՝ <u>եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները</u>***

Տրվել են մի շարք առաջարկություններ, որոնք բոլորը ընդունվել են գործընկերների կողմից:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Recoverable Signature

X 

ԳԱՅԱՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Signed by: GABRIELYAN GAYANE 5912850486

Գայանե Գաբրիելյան